

Ամփոփում

1. Գտեք տրված թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

- [12,8]
- [7,8]
- [4,5]
- [3,11]
- [5,12]

2. Գտեք տրված թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

- (15,18)
- (24,12)
- (180,6)
- (12,18)
- (15,35)

3. Գտե՛ք թվի բոլոր պարզ բաժանարարները.

36, 369, 48, 75

4.

- $\frac{1}{15}, \frac{1}{5}$ և $\frac{2}{5}$ կոտորակները ներկայացրու 75 հայտարարով կոտորակների տեսքով:
- $\frac{9}{24}$ և $\frac{4}{12}$ կոտորակները բեր ամենափոքր ընդհանուր հայտարարի: Ո՞րը կլինի ամենափոքր ընդհանուր հայտարարը:

5. Կոտորակները դասավորե՛ք

- աճման կարգով.

$$\frac{18}{23}, \frac{9}{23}, \frac{22}{23}, \frac{27}{23}, \frac{24}{23}$$
$$\frac{3}{4}, \frac{5}{6}, \frac{1}{2}, \frac{11}{12}, \frac{7}{8}, \frac{9}{10}, \frac{8}{9}, \frac{2}{3}$$

- նվազման կարգով.

$$\frac{17}{8}, \frac{9}{9}, \frac{3}{8}, \frac{5}{8}, \frac{91}{8}, \frac{291}{8}, \frac{1}{8}, \frac{23}{8}$$

$$\frac{7}{9}, \frac{5}{6}, \frac{5}{7}, \frac{3}{8}, \frac{9}{8}, \frac{11}{3}, \frac{7}{6}, \frac{5}{4}$$

6.

- Գումարեք կոտորակները:

$$\frac{121}{16} + \frac{42}{16}$$

$$\frac{17}{20} + \frac{4}{4}$$

- Կատարեք կոտորակների հանում:

$$\frac{33}{18} - \frac{12}{18}$$

$$\frac{23}{15} - \frac{2}{5}$$

- Կատարեք բազմապատկում.

$$\frac{4}{6} \cdot \frac{5}{12}$$

$$4 \cdot \frac{15}{18}$$

- Կատարեք բաժանում:

$$\frac{24}{10} : \frac{4}{7}$$

$$\frac{14}{6} : \frac{7}{6}$$

7.

- Գումարեք խառը թվերը:

$$15\frac{5}{19} + 3\frac{11}{19}$$

- Կատարեք խառը թվերի հանում:

$$2\frac{5}{18} - 1\frac{5}{9}$$

- Կատարեք խառը թվերի բազմապատկում:

$$4\frac{7}{16} \cdot 12\frac{2}{6}$$

- Կատարեք խառը թվերի բաժանում:

$$15\frac{4}{13} : 5\frac{8}{9}$$

8. Խորանարդի բոլոր կողերի երկարությունների գումարը 132 սմ է:
Գտե՛ք նրա ծավալը:

9. Շրջանաձև վազքուղու մեկնարկային կետից միաժամանակ մինևույն ուղղությամբ դուրս եկան երկու հեծանվորդ: Քանի՞ րոպեից նրանք նորից կհանդիպեն մեկնարկային կետում, եթե նրանցից մեկը մի լրիվ պտույտը կատարում է 8 րոպեում, մյուսը՝ 10 րոպեում: